




Եվրասիա միջազգային համալսարան

Փաստ. անվանումը	Գիտական խորհրդի գործունեության կանոնակարգ
Փաստ. N	ԵՄՀ/ԸԿ-ԿԳ-04-01
Հաստատման ամսաթիվը	02/11/2009
Արձանագրության N	
Հաստատող մարմինը	Գիտական խորհուրդ
Անուն/Ազգանուն/ Պաշտոն	Սուրեն Օհանյան/նախագահ
Ստորագրություն	




Բովանդակություն

1. Փաստաթղթի փոփոխությունները.....	3
2. Փաստաթղթի բաշխումը.....	3
3. Հղումներ.....	3
4. Ընդհանուր դրույթներ.....	4
5. ԵՄՅ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	4
6. ԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ.....	5
7. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ.....	5
8. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ.....	5
9. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ և ՆԻՍՏԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ.....	6
10. ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ.....	7
11. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ ՔԿԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ.....	7
12. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ.....	8
13. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.....	8
14. ԵՄՅ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	8

1. Փաստաթղթի փոփոխությունները

Ամսաթիվ	Կատարված փոփոխություն	Անուն, ազգանուն, պաշտոն, Ստորագրություն
12/12/2014	Վերանայվել է կարգն ամբողջությամբ	Սուրեն Օհանյան, նախագահ



2. Փաստաթղթի բաշխումը

N	Տեսակը (օրիգինալ, պատճեն)	Ստորաբաժանում	Ստորագրություն

3. Հղումներ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԵՎՐԱՍԻԱ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. Ընդհանուր դրույթներ

- 4.1. Սույն կանոնակարգը սահմանում է Եվրասիա Միջազգային Համալսարանի (այսուհետ՝ ԵՄՀ) գիտական խորհրդի (այսուհետ՝ գիտական խորհուրդ) կազմի ձևավորման և գործունեության կարգը, նիստերի նախապատրաստման և անցկացման, որոշումների ընդունման ընթացակարգը:
- 4.2. Գիտական խորհրդի կանոնակարգը համալսարանի կանոնադրության 35-րդ կետի 1 ենթակետի հիման վրա հաստատում է ԵՄՀ-ի գիտական խորհուրդը
- 4.3. Սույն կանոնակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են գիտական խորհրդի կողմից:

2. ԵՄՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 5.1. Գիտական խորհուրդը ԵՄՀ-ի ռեկտորի նախագահությամբ գործող կառավարման մարմին է, որը լուծում է ԵՄՀ-ի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության կազմակերպման, պլանավորման և կառավարման հիմնահարցերը:
- 5.2. Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը հինգ տարի է: Գիտական խորհրդի նիստերը գումարվում են երկու ամիսը առնվազն մեկ անգամ:
- 5.3. Գիտական խորհուրդը՝
 - հաստատում է իր կանոնակարգը,
 - ռեկտորի ներկայացմամբ՝ որոշում է ստեղծել, վերակազմակերպել, լուծարել ֆակուլտետներ, կենտրոններ, քոլեջներ, ավագ դպրոցներ, ինչպես նաև ամբիոններ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ,
 - հաստատում է կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերը (այդ թվում՝ օրինակելի), ԵՄՀ և կառուցվածքային ստորաբաժանումների հիմնական գործունեությունը և ուսումնական գործընթացը կանոնակարգող ներքին իրավական այլ ակտերը,
 - քննարկում և հաստատում է կրթական ծրագրերը,
 - քննարկում է գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները,
 - լսում է գիտական հաղորդումներ ԵՄՀ-ում կատարվող կարևորագույն գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների արդյունքների մասին,
 - ընդունում է պատվավոր կոչումներ շնորհելու, մրցանակներ, անվանական կրթաթոշակներ տալու, ԵՄՀ շքանշանով և մեդալով պարգևատրելու, հանրապետական ու միջազգային պարգևների և կոչումների համար թեկնածություններ ներկայացնելու մասին որոշումներ,
 - հաստատում է ֆակուլտետի դեկանի և աբիոնի վարիչի ընտրությունների ընթացակարգերը,
 - իրականացնում է ֆակուլտետի դեկանի ամբիոնի վարիչների և պրոֆեսորների ընտրությունները՝ փակ գաղտնի քվեարկությամբ
 - սահմանված կարգով շնորհում է գիտական կոչումներ,
 - նոր մասնագիտությունների գծով կրթական ծրագրեր իրականացնելու վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում կրթության պետական կառավարման լիազորված մարմին,

- քննարկում և հիմնադրի հաստատմանն է ներկայացնում համալսարանի ուսումնական մասնագիտությունների ու մասնագիտացումների անվանացանկը,
- ընդունում է որոշում նոր մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման վերաբերյալ և ներկայացնում կառավարման լիազորված մարմնի հաստատմանը,
- քննարկում և հաստատում է համալսարանի մեթոդական խորհրդի կողմից ներկայացված առաջարկությունները և նախագծերը,
- քննարկում է հանրապետության հասարակական, քաղաքական, կրթական, գիտական և մշակութային կյանքին ու կարևորագույն իրադարձություններին վերաբերող խնդիրներ, ըստ անհրաժեշտության ընդունում է հայտարարություններ,
- իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունից և ԵՄՀ կանոնադրությունից բխող այլ լիազորություններ:

3. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

- 5.4. Գիտական խորհրդի անդամների ընդհանուր թիվը չի կարող գերազանցել 21-ը: Գիտական խորհրդի կազմի մեջ մտնում են ի պաշտոնե ռեկտորը, որը ԵՄՀ-ի գիտական խորհրդի նախագահն է, պրոռեկտորները, գիտական քարտուղարը, ֆակուլտետների, մասնաճյուղերի և այլ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, վաստակաշատ պրոֆեսորներ, ինչպես նաև ուսանողներ՝ սույն կանոնակարգին համապատասխան:
- 5.5. Գիտական խորհրդի անդամների թվի քսանհինգ տոկոսն ուսանողներն են, ներառյալ ուսանողական խորհրդի նախագահը, որոնց առաջադրումն ու ընտրությունն իրականացնում է համապատասխան մակարդակի ուսանողական ինքնակառավարման ընտրովի ներկայացուցչական մարմինը՝ ուսանողական խորհուրդը իր կանոնադրությամբ սահմանված կարգով:
- 5.6. Գիտական խորհրդի կազմը հաստատվում է ռեկտորի հրամանով՝ հինգ տարի ժամկետով:

4. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

Համալսարանի գիտական խորհրդի նիստերում քարտուղարում է համալսարանի գիտական խորհրդի քարտուղարը, ով համակարգում է գիտական խորհրդի նիստերի նախապատրաստման աշխատանքները, գրանցում է նիստին մասնակցող գիտական խորհրդի անդամներին, կազմում է գիտական խորհրդի նիստերի արձանագրությունները, պատրաստում է քվեաթերթիկները:

5. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

- 8.1. Հաշվիչ հանձնաժողովը ստեղծվում է գիտական խորհրդի որոշմամբ՝ խորհրդի անդամների փոխատեղման (ռոտացիայի) սկզբունքով: Յուրաքանչյուր նիստում հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատում է գիտական խորհուրդը՝ գիտական խորհրդի նախագահի առաջարկությամբ՝ ըստ գիտական խորհրդի ցուցակային կազմի:
- 8.2. Հաշվիչ հանձնաժողովը կազմակերպում և անցկացնում է քվեարկություններ, պարզաբանում է քվեարկության ընթացքում առաջացող հարցերը, քվեարկության կարգը, ապահովում է քվեարկության կարգի պահպանումը, կազմում է արձանագրություն քվեարկության արդյունքների վերաբերյալ և այն ներկայացնում է համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՅԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

- 8.3. Գիտական խորհրդի որոշմամբ, ըստ անհրաժեշտության կարող են ստեղծվել մշտական կամ ժամանակավոր համահամալսարանական հանձնաժողովներ (մրցութային, որակի ապահովման, կանոնակարգերի մշակման և այլն), որոնց կարգավիճակը, կառուցվածքը, իրավասությունը և աշխատակարգը սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, համալսարանի կանոնադրությամբ և սույն կանոնակարգով:
- 8.4. Հանձնաժողովների խնդիրն է իրենց կանոնակարգման ոլորտի հարցերի ուսումնասիրումը, նախապատրաստումը և դրանք առաջարկության ձևով գիտական խորհրդին ներկայացնելը:
- 8.5. Հանձնաժողովների կառուցվածքը և կազմը որոշում է գիտական խորհուրդը:
- 8.6. Հանձնաժողովներն իրենց ոլորտին վերաբերող հարցերը քննարկում են գիտական խորհրդի և /կամ/ ռեկտորի հանձնարարությամբ:
- 8.7. Հանձնաժողովներն իրավասու են ԵՄՀ կառավարման մարմիններից, կառուցվածքային ստորաբաժանումներից և պաշտոնատար անձանցից պահանջելու և ստանալու անհրաժեշտ փաստաթղթեր ու նյութեր:
- 8.8. Հանձնաժողովների նիստերն իրավազոր են հանձնաժողովի անդամների առնվազն կեսի ներկայության դեպքում: Համահամալսարանական հանձնաժողովի նիստերը արձանագրվում են:
- 8.9. Համահամալսարանական հանձնաժողովների փաստաթղթերը և եզրակացությունները հաստատվում են նիստին ներկա գտնվող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Չայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:
- 8.10. Հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն հանձնաժողովում քննարկված հարցերի վերաբերյալ ունենալ հատուկ կարծիք և պահանջել որպեսզի այն ներառվի արձանագրության մեջ: Նրանք իրավասու են նաև այդ հարցը ներկայացնել համալսարանի գիտական խորհրդին:

6. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ և ՆԻՍՏԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐՎԱՏՈՒՄԸ

- 9.1. Գիտական խորհուրդն իր լիազորություններն իրականացնում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով:
- 9.2. Գիտական խորհրդի հերթական նիստերը հրավիրվում են երկու ամիսը մեկ անգամ:
- 9.3. Գիտական խորհրդի նիստերը նախապատրաստում են ԵՄՀ ռեկտորը (գիտական խորհրդի նախագահ) և գիտական քարտուղարը (գիտական խորհրդի քարտուղար):
- 9.4. Գիտական խորհրդի քարտուղարը, գիտական խորհրդի նիստ (հերթական կամ արտահերթ) հրավիրելու և նիստի օրակարգի մասին գրավոր ծանուցում է գիտական խորհրդի անդամներին հերթական նիստի անցկացման օրվանից առնվազն երեք օր առաջ, արտահերթ նիստի անցկացման օրվանից առնվազն երկու օր առաջ: Գիտական խորհրդի տվյալ նիստում քննարկվող հարցերի վերաբերյալ փաստաթղթերը (որոշումներ, նախագծեր, տեղեկանք-հիմնավորումներ և այլն) գիտական խորհրդի անդամներին ուղարկվում է նիստի անցկացման օրվանից առնվազն երեք աշխատանքային օր առաջ:
- 9.5. Գիտական խորհրդի արտահերթ նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության՝ գիտական խորհրդի նախագահի կողմից կամ գիտական խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդի գրավոր առաջարկությամբ՝ նրանց կողմից առաջարկված օրակարգով և ժամկետներում:

7. ԵՎՐԱՄԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

- 10.1. Համալսարանի գիտական խորհրդի նիստը համարվում է իրավազոր, եթե դրան մասնակցում է գիտական խորհրդի անդամների առնվազն 2/3-ը: Որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
- 10.2. Գիտական խորհրդի անդամների ներկայությունը գրանցում է գիտական քարտուղարը՝ նիստն սկսվելուց առաջ: Քվորումը չապահովվելու դեպքում գիտական խորհրդի անդամների գրանցման գործընթացը կարող է երկարաձգվել մինչև 30 րոպե, իսկ դրանից հետո քվորում չապահովվելու պարագայում նիստը հետաձգվում է:
- 10.3. Գիտական խորհրդի քվորումի բացակայության պատճառով հետաձգված նիստը՝ նույն օրակարգով, գումարվում է սույն կանոնակարգով սահմանված ընդհանուր հիմունքներով:
- 10.4. Գիտական խորհրդի նախագահը, բացելով խորհրդի նիստը, տեղեկատվություն է տրամադրում քվորումի առկայության վերաբերյալ և քվեարկության է դնում նիստի օրակարգը:
- 10.5. Գիտական խորհրդի անդամները կարող են առաջարկել նիստի օրակարգում ընդգրկել այլ հարցեր, ինչը սահմանված կարգով դրվում է քվեարկության:
- 10.6. Նիստի օրակարգում ներառված հարցերի քննարկման կարգը, հիմնական և հարակից զեկույցների, ինչպես նաև ելույթների տևողությունը որոշում է գիտական խորհուրդը՝ գիտական խորհրդի նախագահի առաջարկությամբ:

8. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

- 11.1. Գիտական խորհրդի որոշումներն ընդունվում են գիտական խորհրդի նիստին ներկա գտնվող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ, եթե գիտական խորհուրդն այդ որոշման ընդունման համար քվեարկության այլ կարգ չի սահմանել:
- 11.2. Պաշտոնների զբաղեցման, գիտամանկավարժական պաշտոնների տեղակալման և գիտական կոչումների ներկայացման, դեկանների, ամբիոնի վարիչների ընտրության ու այլ մրցույթները կատարվում են փակ, գաղտնի քվեարկությամբ:
- 11.3. Փակ, գաղտնի քվեարկության համար նախատեսված քվեաթերթիկները պատրաստում է գիտական քարտուղարը՝ մինչև գիտական խորհրդի նիստը:
- 11.4. Քվեաթերթիկում նշվում է գիտական խորհրդի նիստի անցկացման ամիս-ամսաթիվը, տարին, հերթական համարը, քվեարկության դրվող հարցի բովանդակությունը, քվեարկության հնարավոր տարբերակները («կողմ», «դեմ»):
- 11.5. Քվեաթերթիկի հակառակ երեսին ստորագրում է գիտական քարտուղարը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ գիտական խորհրդի որոշմամբ նաև հաշվիչ հանձնաժողովի նախագահը և անդամները:
- 11.6. Քվեարկությունից առաջ հաշվիչ հանձնաժողովի նախագահը, ըստ անհրաժեշտության, գիտական խորհրդին տեղեկատվություն է տրամադրում քվեարկության անցկացման և քվեաթերթիկի լրացման կարգի վերաբերյալ:
- 11.7. Քվեաթերթիկը վավերական է, եթե դրանում քվեարկվել է միայն մեկ տարբերակ:
- 11.8. Հաշվիչ հանձնաժողովի անդամներն առանձին սենյակում բացում են քվեատուփը և իրականացնում են քվեարկության արդյունքների հաշվառում:
- 11.9. Քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում է հաշվիչ հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:
- 11.10. Քվեարկության արդյունքները հաստատման նպատակով հայտարարվում են գիտական խորհրդի նույն նիստում:

9. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- 12.1. Գիտական խորհրդի որոշումները կիրարկվում են ռեկտորի հրամաններով:
- 12.2. ԵՄՀ Ռեկտորն իրավասու է կասեցնելու գիտական խորհրդի այն որոշումները, որոնք չեն բխում նրա լիազորություններից, հակասում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը, ԵՄՀ կանոնադրությանը, սույն կանոնակարգին և ներքին իրավական այլ ակտերին:

10. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

- 13.1. Գիտական խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստերի արձանագրությունը երկու օրինակից կազմում է գիտական քարտուղարը գիտական խորհրդի նիստն ավարտվելուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Արձանագրությունը ստորագրում են
- 13.2. Արձանագրության մեջ պետք է նշվեն նիստի անցկացման ժամանակը, նախագահը, գիտական քարտուղարը, քվեակազմը, նիստի օրակարգը, ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերի բովանդակությունը, քվեարկության արդյունքները և գիտական խորհրդի կողմից ընդունված որոշումները:

11. ԵՄՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 14.1. Գիտական խորհուրդը ԵՄՀ-ի ռեկտորի նախագահությամբ գործող կառավարման մարմին է, որը լուծում է ԵՄՀ-ի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության կազմակերպման, պլանավորման և կառավարման հիմնահարցերը:
- 14.2. Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը հինգ տարի է: Գիտական խորհրդի նիստերը գումարվում են յուրաքանչյուր ամիսը առնվազն մեկ անգամ:
- 14.3. Գիտական խորհուրդը՝
 - հաստատում է իր կանոնակարգը,
 - ռեկտորի ներկայացմամբ՝ որոշում է ստեղծել, վերակազմակերպել, լուծարել ֆակուլտետներ, կենտրոններ, քոլեջներ, ավագ դպրոցներ, ինչպես նաև ամբիոններ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ,
 - հաստատում է կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերը (այդ թվում՝ օրինակելի), ԵՄՀ և կառուցվածքային ստորաբաժանումների հիմնական գործունեությունը և ուսումնական գործընթացը կանոնակարգող ներքին իրավական այլ ակտերը,
 - քննարկում և հաստատում է կրթական ծրագրերը
 - քննարկում է գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները,
 - լսում է գիտական հաղորդումներ ԵՄՀ-ում կատարվող կարևորագույն գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների արդյունքների մասին,
 - ընդունում է պատվավոր կոչումներ շնորհելու, մրցանակներ, անվանական կրթաթոշակներ տալու, ԵՄՀ շքանշանով և մեդալով պարգևատրելու, հանրապետական ու միջազգային պարգևների և կոչումների համար թեկնածություններ ներկայացնելու մասին որոշումներ,
 - հաստատում է ֆակուլտետի դեկանի և ամբիոնի վարիչի ընտրությունների ընթացակարգերը,
 - իրականացնում է ֆակուլտետի դեկանի ամբիոնի վարիչների և պրոֆեսորների ընտրությունները՝ փակ գաղտնի քվեարկությամբ
 - սահմանված կարգով շնորհում է գիտական կոչումներ

- նոր մասնագիտությունների գծով կրթական ծրագրեր իրականացնելու վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում կրթության պետական կառավարման լիազորված մարմին,
- քննարկում և հիմնադրի հաստատման է ներկայացնում համալսարանի ուսումնական մասնագիտությունների ու մասնագիտացումների անվանացանկը
- ընդունում է որոշում նոր մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման վերաբերյալ և ներկայացնում կառավարման լիազորված մարմնի հաստատմանը
- քննարկում է հանրապետության հասարակական, քաղաքական, կրթական, գիտական և մշակութային կյանքին ու կարևորագույն իրադարձություններին վերաբերող խնդիրներ, ըստ անհրաժեշտության ընդունում է հայտարարություններ,
- իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունից և ԵՄՀ կանոնադրությունից բխող այլ լիազորություններ: